ԺԸ·

ՅԱԿՈՎԲ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ· — ՌՃԻ·=1672 ՕԳՈՍՏ· 28·

(Լռեալ զի Նիկող· արքեպիսկոպոս կոչեցեալ է ի Հռովմ, և ոչ գիտելով երբ դարձցի, առաքէ զԹեոդորոս եպս· Վարդանեանց՝ ի տեղակալ, և յաջորդ)։

ԻՍՈՒՍԻ Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս կաթողիկէ եկեղեցւոյ Հայաստանեայց, վեհ և վերադիտող ամենայն Հայկազեան սեռի, և պատրիարգ ի Վաղարշապատ քաղաքի առաքելական աթոռոյ, ի տեղւոջ Իջման Բանին Աստուծոյ· տեղապահ և յաջորդ աթոռակալ և փոխանորդ մեծահռչակ տեառն մերոյ և հօրն հասարակաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին· Յորմէ ժամանեալ հասցէ նամակ աւրհնութեան և քարտէզ պահպանութեան, հանդերձ լիութեամբ վերնահոս շնորհաց և յաստուածուստ առատաբուխ պարգեւացն, ի վերայ ընդհանուր հայկականաց տոհմից և Թորգոմեանց սեռից, որք ի Լեհաց երկրին բնակեալ են· մանաւանդ ի տիրապահ և ի քրիստոսախնամ քաղաքին Լովայ, երկնահրաւէր և սրբանուէր քահանայից, արդարադատ և խորիմաստ դատաւորաց, և ամենայն առհասարակ եկեղեցականաց և ժողովրդոց, մեծաց և փոքունց· Առաքելական աւրհնութիւն և լիութիւն աստուածային շնորհաց· Շնորհք և բազմապարգեւ աւրհնութիւնն ծագեսցէ ի վերայ ձեզ և ամենայն գոյականացդ, և ամենայն ազգականաց և բարեկամաց ձերոց, յանապատ աղբերէն աստուածութեան և յանմատոյց լուսոյ եռալուսնեան զուգակցութեանց հանգունատիպ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ· ամէն։ Այլ և բարեխօսութեամբ և մաղթանաք ամենասուրբ Կուսին Մարիամու Աստուածամօրն, և որոց իշխանութիւն ի վերուստ տուաւ ի վերայ երկրի՝ երկրաւոր և երկնաւոր բանալեաք տիրել ազգաց և ազանց, մանաւանդ երիցս երանելոյն Լուսաւորչի մերոյ Սրբոյն Գրիգորի, և ամենայն երկնագումար խմբից· գերալոյս և գերահրաշ մէգն աստուածութեան ի ներքոյ վարագուրին բնակեալ, և ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ ծաւալեսցէ ի ձեզ զլոյս աստուածգիտութեան, և առատանուէր հոսմամբ և բազմամանեայ յաճախութեամբ մեծին երախտեաց ի ձեզ ամե-